



Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ԱՆՏԻՈՔԱՑԻ  
(354—407)

ԺԱՄԱՆԱԿԱԾՐՋԱՆԸ, ԿՅԱՆՔԻ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.

Ընդհանուր եկեղեցու պատմության մեջ իրենց բազմաժանր մատենագրական վաստակով, սրբակրոն կյանքով ու եկեղեցական-քարոզչական գործունեությամբ **Հարք եկեղեցույ** են կոչվում Արևելքի չորս մեծ հայրապետները՝ **ս. Բարսեղ Կեսարացին**, **ս. Գրիգոր Նազիազանցին**, **ս. Հովհան Ոսկեբերանը** և **ս. Աթանաս Ալեքսանդրացին**:

Հույն եկեղեցին, բացի վերոհիշյալ այս չորս մեծ հայրապետներից, ընդունում է նաև համաքրիստոնեական նշանակություն ունեցող երեք **Վարդապետք եկեղեցույ՝** **ս. Բարսեղը**, **ս. Գրիգոր Նազիազանցին** և **ս. Հովհան Ոսկեբերանը**:

Արևմտյան եկեղեցին ևս ճանաչում է որպես մեծ եկեղեցական հեղինակություններ Արևելքի այս չորս մեծ հայրապետներին: Սակայն, Բոնիֆակիոս Պապը 1296 թվականին Արևմուտքի համար **Վարդապետք եկեղեցույ** է հռչակում Օգոստինոսը, Ամբրոսիոսը, Հերոնիմոսը և մեծն Գրիգոր Պապը:

«Դիտելի է, որ ասոնցմե ոչ մեկը սուրբ չէ ճանչցած հալ եկեղեցին, հետևաբար մտած չեն մեր տոնացույցի մեջ» (Մաղաքիա արք. Օրմանյան, «Վարդապետք եկեղեցույ», ձեռագիր, էջ 43—44): Արևմտյան եկեղեցու համար վերոհիշյալ չորս վարդապետներն ունեն նաև **Հարք եկեղեցույ** կոչված հայրապետների կարևորությունն ու

նշանակությունը, թեև հետագա դարերում Արևմտյան եկեղեցու ընդունած «Վարդապետք եկեղեցույ» խմբի վրա ավելացել են նաև այլ աստվածաբաններ:

«Վարդապետք եկեղեցույ» և «Հարք եկեղեցույ» հասկացությունները սակայն նույնը չեն<sup>2</sup>:

«Հարք եկեղեցույ» են կոչվում միայն այն հայրապետները, որոնք իրենց կյանքի և գործունեության մեջ միացրել են չորս անհրաժեշտ չափանիշեր՝ **հավատքի ուղղափառություն, վարքի սրբություն, եկեղեցական փորձ և վաղեմիություն (հնություն)**: Իսկ «Վարդապետք եկեղեցույ» հասկացությունը վերաբերվում էր քրիստոնեական վարդապետությունը ուսուցանողներին, անցյալում միայն եպիսկոպոսներին, և կամ եկեղեցական ուղղափառ գրողներին, առանց նկատի ունենալու նրանց նվիրապետական աստիճանը<sup>3</sup>. «Թէպէտ և քիւր դաստիարակներ ունէք Քրիստոսով, բայց ո՛չ քազում հայրեր»<sup>4</sup>:

Մեր եկեղեցին ընդունում և մեծարում է հիշատակը Արևելքի չորս մեծ «Հարք եկեղեցույ» կոչված հայրապետների<sup>5</sup> և նրանց տոնը կատարում է առանձին: Այսպես, **ս. Բարսեղի տոնը՝** հունվարի 1-ին<sup>6</sup>, **ս. Գրի-**

<sup>2</sup> Quasten, նույնը, էջ 10:  
<sup>3</sup> Հմմտ. Ա. Կորնթ. Դ 15:  
<sup>4</sup> Նոր Կտակարան, Մայր Աթոռ, 1975, էջ 454:  
<sup>5</sup> «Լույս» շաբաթաթերթ, Կ. Պոլիս, 1905, էջ 1029:  
<sup>6</sup> Մայր Աթոռի Օրացույց, 1977, էջ 14:

<sup>1</sup> Johannes Quasten, Patrology, II հատոր, էջ 10.

գոր Նազիազանցու տոնը՝ հունվարի 29-ին<sup>7</sup>,  
 և Հովհան Ոսկերեբանի՝ հոկտեմբերի  
 28-ին<sup>8</sup>, և և Աթանասինը՝ հունվարի 22-ին<sup>9</sup>։  
 Հայ եկեղեցին ընդունում և մեծարում է  
 նաև անունն ու հիշատակը մինչև Քաղկե-  
 դոնի ժողովը (451) ապրամ և ստեղծագոր-  
 ծած ընդհանուր եկեղեցու «Երկուտասան  
 վարդապետաց»<sup>10</sup>։ «Երկուտասան» վարդա-  
 պետներու տոնը շատ հին է, ինչպես կերևի  
 մեր Մաշտոցի Չեղևարության կանո-  
 նեն<sup>11</sup>։

Արևելյի չորս մեծ եկեղեցական հայրերի  
 և հույն եկեղեցու երեք համաքրիստոնեա-  
 կան նշանակություն ունեցող վարդապետ-  
 ների մեջ միայն և Հովհան Ոսկերեբանն  
 է, որ պատկանում է Անտիոքի դպրոցին։

Անցյալի եկեղեցական հայրերից և ոչ մե-  
 կը չի ունեցել այնքան ամբողջական վար-  
 քագրություն և կենսագրություն, որքան և  
 Հովհան Ոսկերեբանը։

408 թվականին Հելենոպոլսի Պալլատիոս  
 եպիսկոպոսը արտոնում շարադրել է մեծ  
 Սուրբի նշանավոր վարքը, որը կոչվում է  
**Երկխոսություն և Հովհան Ոսկերեբանի  
 կյանքի մասին**։ Սույն վարքի գրության առ-  
 թիվ կենսագիրը օգտագործել է որպես օրի-  
 նակ Պատմի Phaedo—Փեդոլոն—աշխա-  
 տությունը<sup>12</sup>։

Վերոհիշյալ «Երկխոսությունը» տեղի է  
 ունենում 407 թվականին, Ոսկերեբանի  
 մահվան առթիվ, Արևելյի մի եպիսկոպո-  
 սի և հոռոմեացի մի սարկավագի միջև։

Պալլատիոս եպիսկոպոսի «Երկխոսու-  
 թյունը» միաժամանակ ուժեղ մի ջատագո-  
 վություն է ի պաշտպանություն և Հովհան  
 Ոսկերեբանի, Ալեքսանդրիայի Թեոփիլոս  
 պատրիարքի (385—412) նրա դեմ գրած  
 անվանարկիչ պամֆլետի։ Թեոփիլոսը Ոս-  
 կերեբանի վտանգավոր հակառակորդներից  
 մեկն էր։ Այս մասին՝ ստորև։

Ս. Հովհան Ոսկերեբանի մի այլ վարք  
 մեզ հասել է **Գրիգոր Բ Վկայասեր հայոց  
 կաթողիկոսի** (1066—1105) թարգմանու-  
 թյամբ։ Սույն վարքը կոչվում է «Պատմու-  
 թիւն վարոց (սքանչելեաց և դիպուածոց

արոյն) **Յովհաննու Ոսկերեբանի** (Հայրա-  
 պետին Վ. Պոլսոյ, Տիգրեբաց Լուսատրչի  
 ծննդեան, և գեղեցիկ քաղաքավարութեան)  
**թարգմանեցեալ ի յունկանէ ի հայս ի  
 Գրիգորէ կաթողիկոսի Վկայասեր կոչեցե-  
 լոյ»<sup>13</sup>։**

Ոսկերեբանի սույն վարքը հրատարակվել  
 է Վենետիկում, «Ի Հայրապետութեան ար-  
 բոյ Էջմիածնի Տեան Մինասայ Ակնեցոյ,  
 յամի Տեան 1752. ի յունիսի ա»։ Գիրքը  
 բաղկանում է 318 էջերից և 32 գլուխներից։

Ոսկերեբանի «Պատմութիւն վարոց»-ը  
 հրատարակության է պատրաստել Սարգիս  
 արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսեցին, որը  
 և գրել է «Նախարան առ քարեմիտ ընթեր-  
 ցողս» հատաչարանը<sup>14</sup>։

Հրատարակիչը վարքի տպագրության ա-  
 ռիթով մեծ ոգևորությամբ ներկայացնում է  
 իր հատաչարանում Ոսկերեբանի «Զբարձ-  
 րութիւն գերահրաշ իմաստութեան, զհան-  
 դեսն զանազան սքանչելեաց, զհանգամանս  
 հոգիաշունչ քարոզութեան, զյարաշիտս  
 գոյն ի բացատրումն արքոց Գրոց, զնա-  
 խանձայոյժ բորբոքումն վասն աստուածա-  
 յին օրինաց, զցաակցական գութն դէպ ի  
 մեղաորս, զմարտութիւն ներքին մարդոյն,  
 զմահացումն արտաքին զգայութեանցն, և ի  
 վերոյ քան զամենայն զյոժարական տանե-  
 լիութիւն բազմադիմի հակամարտեանց,  
 նեղութեանց, հալածանաց, արտրանաց և  
 մարտիրոսութեանց»<sup>15</sup>։

Ոսկերեբանը ծնվել է 354 թվականին Ան-  
 տիոքում, ինչպես իր բարեկամ Թեոդորոս  
 Մոպսուեստացին։ Նա որդին էր ազնվական  
 «առն ուրումն երևելոյ, որում անունն էր  
 Սեկունդոս, որ էր զօրապետ կարգեալ ի  
 թագաւորացն, էր և փարթամութեամբն ևս  
 առաւելեալ»<sup>16</sup>։

Ոսկերեբանի մայրը՝ Անդուսան, որը  
 «թարգմանի հայերէն ծաղիկ, էր դուստր  
 գլխատրաց քաղաքի» և հոչակվել էր Ան-  
 տիոքում իր բարեպաշտությամբ և առաքի-  
 նագարդ կենցաղով<sup>17</sup>։

Ոսկերեբանի ծնողները «էին հեղինակացի,  
 և արտաքին իմաստութեամբ բարգաւա-  
 նեալ»։

Անտիոքի Աթոռի Մելեոիոս հայրապետը,  
 որ էր «ազգաւ հայ»<sup>18</sup>, «տեսեալ զճշմարիտ  
 հաւատս նոցա» (Ոսկերեբանի և նրա ծնող-

<sup>7</sup> Նույնը, էջ 25։

<sup>8</sup> Նույնը, էջ 134։

<sup>9</sup> Նույնը, էջ 23։

<sup>10</sup> Նույնը, էջ 132։

<sup>11</sup> «Լույս» շարաթարթր, նույնը, էջ 1022։

<sup>12</sup> Հակական հին դպրության պատմություն (Գ—  
 ԺԳ դդ.), Վենետիկ, 1886, էջ 567։ Նորայր եպի-  
 կոպոս Պողոսյան, Հայ գրողներ, Ե—ԺԷ դար, Երու-  
 սաղեմ, 1971, էջ 182։ Մանուկ Արեղյան, Հայոց հին  
 զբաղմունքային պատմություն, հատ. Բ, Երևան,  
 1946, էջ 21։

<sup>13</sup> Հայ հնատիպ գրքի մատենագրական ցուցակ  
 (1512—1800), Երևան, 1963, էջ 129։

<sup>14</sup> Պատմութիւն վարոց, էջ IV—XI։

<sup>15</sup> Նույնը, էջ V։

<sup>16</sup> Պատմութիւն վարոց, նույնը, էջ 6։

<sup>17</sup> Նույնը, էջ 6։

<sup>18</sup> Quasten, նույնը, էջ 424։

ների), նախ Հովհաննիս և ապա նրա ծնողներին քրիստոնյա է մկրտում: Մելեոփոսի հսկողության ներքո Հովհաննը ուսանում է Անտիոքում նոր մկրտվածների դպրոցում. «Եւ հաճապագ ցածուրթեամբ և խոնարհութեամբ երթայր հետիոտն ի վարդապետարան»<sup>19</sup>:

Մելեոփոսը, Անտիոքում ուղղափառության այդ քաջարի պաշտպանն ու մեծ խոստովանողը, իր տան մեջ էլ զբաղվում էր անձամբ Ոսկեբերանի քրիստոնեական դաստիարակության հարցով<sup>20</sup>:

Քրիստոնեական դաստիարակության հետ միասին ուսումնաստենջ պատանին հետևում է նաև փիլիսոփայական և արտաքին գիտությունների դասընթացներին, նշանավոր հռետորների և իմաստասիրության դասախոսների մոտ, ինչպիսիք էին այդ օրերին Անտիոքում Անտրակաթիոսն ու Լիբիանոսը: Վերջինս նամակագրական կապի մեջ էր նաև Բ. Բարսեղ Կեսարացու հետ<sup>21</sup>:

Այնուհետև Ոսկեբերանը փիլիսոփայական իր ուսումը շարունակելու համար գնում է Աթենք, ուր աշակերտում է Անթոնիոս փիլիսոփային:

Ոսկեբերանի քրիստոնեական դաստիարակությամբ մեծապես զբաղվում է նրա բարեպաշտ մայրը՝ Անդուսան: Նա 20 տարեկան հասակում կորցնում է իր ամուսնուն: Ոսկեբերանը որբ է մեծանում:

Ըստ Պալլադիոս եպիսկոպոսի վկայության, Ոսկեբերանը 18 տարեկան հասակում ըմբոստանում է իր փիլիսոփա նոր ուսուցիչների դասավանդությունների դեմ՝ դրանք ճողոմ և անբովանդակալից գտնելով, որպես իմացապես արդեն հասուն մտավորական: Այնուհետև մեծ եռանդով և հետևողականությամբ նա զբաղվում է սուրբ Գրոց և աստվածաբանության ուսումնասիրությանը:

Այդ տարիներին Մելեոփոս եպիսկոպոսն արդեն նկատել էր երիտասարդ Հովհաննի արտակարգ, փայլուն ընդունակությունները և սերը դեպի հոգևորական ասպարեզը, վանական-ճգնաժողովական կյանքը և, տպավորված նրա նկարագրի գեղեցկությունից ու շնորհալիությունից, դարձյալ նրան ընդգրկում է իր անմիջական ընկերակցության շրջանակի մեջ: Մելեոփոսի «մարգարեական աչքը նախագուշակում է Ոսկեբերանի խոստումնալից ապագան»<sup>22</sup>:

Նույն շրջանին Ոսկեբերանն «Անտիոք

քաղաքին մոտակա լեռները քաշվեցավ և վաղեմի մենակյացի մը ուղղության ներքո Ե. Գիրք ուսումնասիրեց և աղոթքի ու ինքնաշարժարության (mortification) անձնատուր եղավ: Հետո թաքչեցավ քարայրի մը մեջ, ուր երկու տարի մնաց»<sup>23</sup>, ճգնաժողովական արտակարգ խստակեցությամբ:

Ոսկեբերանի մայրը, մեծապես անհանգրստացած այս բոլորից, հաճախ նամակների միջոցով խնդրում էր նրան վերադառնալ հայրենի տուն և «իրեն կրկին անգամ չայրիացնել»:

Ճգնողական խիստ ու ծանր ուժմիղ քայլաչում է Ոսկեբերանի այն էլ արդեն տկար, վատառողջ ֆիզիկականը և հարկադրում «անոր վերադառնալ Անտիոք»<sup>24</sup>:

381 թվականին Մելեոփոս եպիսկոպոսը Ոսկեբերանին սարկավագ է ձեռնադրում, իսկ նրա հաջորդ Ֆլավիանոս եպիսկոպոսը 386-ին՝ քահանա, և նշանակում Անտիոքի գլխավոր եկեղեցու քարոզիչ: Քարոզչական պաշտոնը «այդ միջոցին միայն եպիսկոպոսները կրնային ունենալ»<sup>25</sup>: Այժմ այդ պատասխանատու պաշտոնը վստահվում էր երիտասարդ Ոսկեբերանին:

12 տարի անընդմեջ, 386—397 թվականներին, Ոսկեբերանը քարոզչի այդ պաշտոնը կատարում է մեծագույն նախանձախրնդի պատասխանատվությամբ, ձեռնհասությամբ և մեծ արդյունավորությամբ:

Այս առթիվ է, որ նա իր հոգեչեն քարոզների համար կոչվում է **Ոսկի հերան**: Նրա քարոզչական համբավը տարածվում է ողջ Արևելքի եկեղեցիներում և Արևմուտքում:

Այդ թվականներին է, որ Ոսկեբերանն Անտիոքում արտասանում էր իր ամենագոյտրիկ քարոզները: «Հույն եկեղեցվո սիեզերահոշակ հայրը, հայր է քրիստոնեական եկեղեցվո ալ...: Անկա հզոր նկարագրի տեր մարդ, օծոված ամենեն ազնիվ բնավորությամբ, դիտող, ուսումնասիրող, քաջ արտահայտվող ոգի մը, հեթանոս վարպետներու քով իր ամբարած հմտությունը և ձեռք բերած հռետորական անմրցելի վարժությունները գեղեցկացուց քրիստոնեական օծությամբ»<sup>26</sup>: «Աներկյուղ կերպով քննադատում էր իր պանծալի քա-

<sup>23</sup> Թորգոմ պատրիարք Գուշակյան, Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 116: Նաև Quasten, նույնը, էջ 425:

<sup>24</sup> Թորգոմ պատրիարք Գուշակյան, նույնը, էջ 116:

<sup>25</sup> Նույնը:

<sup>26</sup> «Լույս», նույնը, էջ 1045:

<sup>19</sup> Պատմություն վարուց, նույնը, էջ 7:

<sup>20</sup> Նույնը, էջ 49:

<sup>21</sup> Quasten, նույնը, էջ 222:

<sup>22</sup> Quasten, նույնը, էջ 425:

բողոքների մեջ նաև աշխարհի մեծերի վատությունն ու անիրավությունները»<sup>27</sup>:

Ոսկերեքանի՝ Անտիոքում անցկացրած խաղաղ ու երջանիկ կյանքը հանկարծ ընդհատվում է, երբ 397-ի սեպտեմբերի 27-ին վախճանվում է Կ. Պոլսի Նեկուարիոս պատրիարքը:

«Աչք ամենեցուն ի նա հայէին»: Ոսկերեքանը պատրիարք է ընտրվում հակառակ իր կամքին:

Նրա պատրիարքության կարճատև շրջանն անցնում է փոթորիկների ու անախորժությունների մեջ:

Մեծ Սուրբը նախ Կ. Պոլիս է տարվում Արկադիոս կալսրի (395—408) հրամանով, խաբեությամբ և բռնությամբ: 398 թվականի փետրվարի 26-ին, կալսրի հրամանով և ճնշումով, Ոսկերեքանին եպիսկոպոս է ձեռնադրում նրա վաղեմի հակառակորդ Ալեքսանդրիայի Թեոփիլոս պատրիարքը, հակառակ իր կամքին:

Ոսկերեքանը, սակայն, օժտված մեծ անհատականությամբ, հզոր նկարագրով և անկուտրում հավատով ու կամքով, իր աստրիարքության առաջին իսկ օրից ձեռնարկում է եկեղեցու, հոգևորականության, մայրաքաղաքի և մանավանդ պալատի անստույգ ու քարոյազուրկ կյանքի բարեկարգության անհետաձգելի գործը: Սակայն իսկույն պարզ է դառնում, որ Ոսկերեքանի պատրիարքական Աթոռ բարձրանալը «մեծագույն դժբախտությունն է հանդիսանում նրա կյանքում»: Ոսկերեքանն առաջին իսկ պահից հատակ ընթրնում է, որ իր տեղը չէ մայրաքաղաքը: Նա երբեք չի կարողանում ի մասնավորի հաշտվել արքունիքի ասպականված բարբերի, կաշտակերության, անստակության, հեթանոսական կենցաղի, այնտեղ տիրող ինտրիգների հետ և միշտ կարոտով է հիշում «գալատական մայրաքաղաք Անտիոքի մարտը մթնոլորտը»<sup>28</sup>:

Ոսկերեքանի ազնիվ և անկաշտ բնավորությունը, նրա նկարագրի վեհությունը թույլ չէին տալիս նրան նաև թճնել ապիկար ու թուլանորթ Արկադիոս կալսրի և մանավանդ «չար ու անզգամ» Եվդոքսիա կալսրուհու (395—404) առջև:

Այս բոլորի տխուր հետևանքն այն է լինում, որ Ոսկերեքանի դեմ կազմվում է թըշնամի և հակառակորդ ուժերի զորեղ մի խմբակ, որը դիմում է բոլոր ատրիմ միջոցների՝ նրան անվանարկելու և տապալելու համար:

<sup>27</sup> Կնիք հաստույ, հրատարակեց Կարապետ Լեպիկոզոս (Տեր-Մկրտչյան), Ս. Էջմիածին, 1914, էջ Լ:

<sup>28</sup> Quasten, նույնը, էջ 425:

Մեծ Հայրապետ, սակայն, չի ընկճվում իր դեմ լարված մեքենայություններից:

Այս առթիվ նա 403-ին, իր առաջին արտոքից առաջ, արտասանում իր մեկ ճառում ցույց է տալիս «Հրաշալի օրինակաւ անասանելի արիւթիւն աստուածային ոգոյ» և, իր խոսքը ուղղելով իր հակառակորդներին, ասում է. **հազմակոհակք են այիք, և զայրացեալ՝ մրրիկն, այ սակայն բնաւ և զանգիտեմք իսկ ոչ, եթէ երբեք անդնդասույզք լինիցիմք, քանզի ի վերա վիմի հաստատեալ ենք: Թող վայրենասցի՝ ծովն, վիմին ոստնանել ո՛չ զօրէ: Առցէ՛ ամբարձցէ՛ զալիսն, զՅիսուսի նան սուզանել ո՛չ ունի՞**:<sup>29</sup>

Ոսկերեքանն իր ողջ եկամտուն այդ տարիներին հատկացնում է հիվանդանոցների կառուցմանը, աղքատների, անիրավիվաճենքի իրավունքների պաշտպանությանը, հոգևորականության և ժողովրդի բարոյականի բարձրացմանը՝ հաշվի չառնելով իր դեմ կուտակվող անհաստատությունն ու անասնձ թշնամությունը:

401 թվականին Ոսկերեքանի նախագահությամբ գումարվում է Եփեսոսում մի սինոդ, ուր ընկնում է առևվում փմոնականության (կաշտակերության) մեջ մեղադրվող 6 եպիսկոպոսների հարցը: Ժողովից հետո եպիսկոպոսները երդվյալ հակառակորդներ են դառնում Ոսկերեքանին: Մեծ Սրբի դեմ «վրեժխնդրությամբ» էր լցված նաև կալսրուհին՝ «պալատականօք հանդերձ»:

Ամպերը կուտակվում էին Ոսկերեքանի շուրջը թե՛ մայրաքաղաքում և թե՛ դրանից հեռու:

Ոսկերեքանի հակառակորդների հետ էր նաև Ալեքսանդրիայի Թեոփիլոս պատրիարքը, որ «չառաջագույն միա՛լք բնդ նմա, վասն քազմափայլ շնորհաց Հոգույն որ բնակեալ էր ի նմա»<sup>30</sup>:

Ալեքսանդրիայի պատրիարքի նախանձն ու անսիրելիությունը Ոսկերեքանի դեմ փոխվում են ստեղծության, երբ նա 402 թվականին Կ. Պոլիս մի ժողովի է կանչվում՝ պատասխանելու համար Եգիպտոսի Նիտրիական անապատի և Ռիզինեպի (180—253) աշակերտ մի շարք ազդեցիկ վանականների մեղադրանքներին<sup>31</sup>: Վերոհիշյալ ժողովին նախագահում էր Ոսկերեքանը՝ որպես Կ. Պոլսի Աթոռի պատրիարքի:

<sup>29</sup> Յոնաննու Ոսկերեքան Հայրապետի Կ. Պոլսի, եպիսկոպոսապետի «Յանտարանագիրն Մատթեոս», գիրք կրկին, Վենետիկ, 1826, էջ 279—285:

<sup>30</sup> Պատմություն վարոց, նույնը, էջ 95:

<sup>31</sup> Ռիզինեպի մասին կարգալ «Էջմիածին» ամսագիր, 1977, № Բ, էջ 22—23:

Թեոփիլոսը Եվրոքսիա կայսրուհու և այլ մուօ ուժերի հետ դաշնակցած, հարմար առիթը հասած է համարում ընդմիջտ տապալելու Ոսկեբերանին: Մեծ Հայրապետի հակառակորդներից ոմանք «ի փառամոլութենէ գոլորշեալք», ուրիշներ՝ «ի նախանձու ամպագունեալք, յարուցանէին յեկեղէջուջն Քրիստոսի զհողմունս երկպառակութեան, գտրիկս խոփութեան, զայնկոծութիւն հակառակութեան և զնաաքեկութիւնս զայթակրութեան»<sup>32</sup>:

Թեոփիլոսը Կ. Պոլիս է հասնում 36 եպիսկոպոսներով, որոնցից 29-ը Ալեքսանդրացիներ էին և Ոսկեբերանի թշնամիներ:

Թեոփիլոսի հետ մայրաքաղաք է գալիս նաև նրա եղբորորդին՝ երիտասարդ, նոր հոգևորական Կյուրեղը, որը հետագայում հանդիսանալու էր Կյուրեղ Ալեքսանդրացի նշանավոր հայրապետը (375—444):

403 թվականի օգոստոսին գումարվում է Քաղկեդոնի մոտ Կաղկյաց կոչված Խառնածողովը՝ Թեոփիլոս պատրիարքի նախագահությամբ:

Ժողովում ս. Հովհան Ոսկեբերանը աթոռագրվում է անհիմն և հերյուրածո ամբաստանություններով, իբր թե նա եկեղեցում նորաձևություններ է մուծում, թույլատրում է թափորով շրջել եկեղեցում, երգերով և սաղմոսներգությամբ պատվել փողոցներում, ձայնավոր ս. պատարագ և ծամասացություն կատարել, սրբապղծում է պատարագն ու սուրբ սեղանը, հաղորդվելուց հետո թույլատրում է մի քիչ ջուր առնել քերանում և կամ մի բան ծամել, որպեսզի ս. Հաղորդության նշխարից մասունքներ չմնան քերանում:

Արկադիոս կայսրը հաստատում է Կաղկյաց «եպիսկոպոսական ժողովի որոշումները» և հրամայում՝ Ոսկեբերանին արտորել Բյուզանդիա, Կ. Պոլսի մոտ:

Ոսկեբերանի շուրջ հավաքված 40 հավատարիմ եպիսկոպոսներ մերժում են ժողովի որոշումը և կայսրի ապօրեն կամայականությունը, իսկ Ոսկեբերանը, եկեղեցական պատակտումը չխորացնելու համար, հետևում է մայրաքաղաքից:

Կաղկյաց ժողովում Թեոփիլոս պատրիարքի մեքենայություններով և կայսրուհու «վրէժխնդրությամբ դատապարտեցաւ արդորն և անկաւ յԱթոռոյ. և ամբոխեալ իբրև զծով խոփեցաւ առ հասարակ թագաւորական քաղաքն, զի ամենեցուն սիրելի էր Սուրբն»<sup>33</sup>:

Երիտասարդ Կյուրեղն այս հարցում հան-

դես է գալիս իր պատրիարք հորեղբոր կողքին՝ ընդդեմ Ոսկեբերանի, և մասնակից է լինում «յուր հորեղբոր գործունեությանը և ոտնձգություններին Ոսկեբերանի դեմ»<sup>34</sup>:

Արևմտքի եկեղեցին, Հռոմի և Միլանի եպիսկոպոսները նույնպես չեն ընդունում Կաղկյաց ժողովի որոշումը՝ այն համարելով հակակառնական:

Ինչո՞ւմ էր կայանում Ալեքսանդրիայի Թեոփիլոս պատրիարքի հակառակությունն ու թշնամությունը ս. Հովհան Ոսկեբերանի դեմ:

Այս հարցի ուսումնասիրությամբ զբաղվել են և՛ ծամանակակիցները, և՛ հետագա դարերի եկեղեցական պատմության մասնագետները:

Պետք է այստեղ արձանագրել, որ Թեոփիլոս պատրիարքը Ալեքսանդրիայի Աթոռի վաստակավոր պատրիարքներից մեկն է, որ 28 տարի (385—412) ղեկավարել է Ալեքսանդրիայի պատմական Աթոռը:

Բայց նրա կենսագիրները վկայում են, որ «նա հավիտենական թշնամի էր խաղաղության և առաքինության, հանդուգն էր և վատ մի մարդ, վայրագ և ծայրահեղորեն անխիղճ, և որի ձեռքերը կեղտոտված են ոսկով և արյունով: Բայց միաժամանակ մտավոր կարողության տեր մեկը, որը հրակայական ազդեցություն է թողել իր ժամանակի թե՛ պետական և թե՛ եկեղեցական գործերի վրա»: Ղպտական եկեղեցին Թեոփիլոսի տոնը կատարում է հոկտեմբերի 15-ին, իսկ սիրիական եկեղեցին՝ հոկտեմբերի 17-ին:

Եկեղեցական պատմության քաջատեղյակ պատմաբաններ Թեոփիլոս պատրիարքի թշնամական վերաբերմունքը Ոսկեբերանի դեմ բացատրում են Ալեքսանդրիայի և Անտիոքի Աթոռների և նրանց աստվածաբանական դպրոցների միջև գոյություն ունեցող աստվածաբանական-մեկնողական տարակարծություններով և մանավանդ հին հակամարտություններով, հակամարտություններ, որոնք վաղուց գոյություն ունեին Աթոռների գերագահության հարցում Ալեքսանդրիայի և Անտիոքի միջև:

Ալեքսանդրացիք աստվածաբանական հարցում անզիջող պայքարի և հակառակության մեջ էին Անտիոքի աստվածաբանական դպրոցի ավելի շեշտված քերականական-պատմական մեթոդների, իսկ եկեղեցական քաղաքականության մեջ՝ Կ. Պոլսի օրավոր աճող հեղինակության դեմ:

Ոսկեբերանը Անտիոքի աստվածաբանական-մեկնողական դպրոցի ամենատաղանդավոր ներկայացուցիչն էր և այդ հանգա-

<sup>32</sup> Պատմություն վարուց, նույնը, էջ VII:  
<sup>33</sup> Պատմություն վարուց, նույնը, էջ 97:

<sup>34</sup> Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց, նույնը, էջ 813:

մանքով էլ բարձրացել էր Ա. Պոլսի պատրիարքական Աթոռի վրա:

Անտիոքի դպրոցում, ի հակադրություն Ալեքսանդրիայի դպրոցի աղբյուրական-իդեալական մեկնության, շեշտը դնում էին Աստվածաշնչի պատմական-քերականական մեկնության վրա: Այն դեպքում, «երբ Ալեքսանդրիայի աստվածաբանները, և մասնավորապես Ռիգինները, գտնվում էին Պատուհի և նոր պատմական փիլիսոփայության ազդեցության տակ, Անտիոքի դպրոցի մեջ հետզհետե գերակշիռ տեղ էր գրավում Արիստոտելի փիլիսոփայությունը, և հաստատվում էր գգաստ, բանական ուղղություն, տրամաբանական մտածողություն, հայտնված վարդապետության իրական քննադատություն: Ու Անտիոքի դպրոցն իր ծաղկման գագաթնակետին հասավ հաջորդ շրջանում, և Ալեքսանդրիայի ու Անտիոքի ուղղությունների միջև կոիվը դառնում է հող՝ հաջորդ դարերի դավանաբանական մեծ վեճերի համար»<sup>35</sup>:

Ալեքսանդրիայի և Անտիոքի աստվածաբանական դպրոցների ուղղությունների միջև գոյություն ունեցող այս հակաձառությունը, ուղղությունների պայքարը սրվում է Ոսկերեքանի պատրիարքության տարիներին, մանավանդ երկու Աթոռների գերագահության մարցում:

Ալեքսանդրիայի Աթոռը, Թեոփիլոսի պատրիարքության ժամանակ էլ որպես քրիստոնեական փառավոր անցյալ ունեցող կենտրոն, փորձում էր «առաջնակարգ դիրք գրավել քրիստոնեության մեջ: Ալեքսանդրիան էր, որ արիտակալ վեճերի ժամանակ երկար կոիվներից հետո, կարողացավ իր վարդապետությունը ընդունելի դարձնել ամբողջ քրիստոնեական եկեղեցու մեջ»: Ալեքսանդրիան որպես կայսրության երկրորդ մայրաքաղաք, փիլիսոփայական ու մտավոր հառաջդիմության կողմից վաղուց առաջին տեղն էր բռնում, նույնիսկ համեմատած Հռոմի հետ»<sup>36</sup>:

Ալեքսանդրիայի և Անտիոքի աստվածաբանական դպրոցների միջև գոյություն ունեցող հակաձառությունից հետո, ուրեմն մեծ վեճերի առիթ էր եղել նաև «պատրիարքների մրցումն իրար հետ: Բնական էր, որ այս քաղաքի եպիսկոպոսներն այնուհետև պիտի առաջնակարգ դիրք գրա-

վեին քրիստոնեական եկեղեցու մեջ... Ալեքսանդրիայի Թեոփիլոս եպիսկոպոսից սկսած այստեղ Աթոռ էին բարձրանում մի շարք այնպիսի եռանդուն եպիսկոպոսներ, որոնք ձգտում են ոչ միայն Արևելքի եկեղեցին իրենց ենթարկել այլ և պատրիարքներ»<sup>37</sup>:

Թեոփիլոսի և նրա եղբորորդի Կյուրել Ալեքսանդրացու պատրիարքության օրով «Ալեքսանդրիայի եպիսկոպոսությունը իր ուժի գագաթնակետին էր հասել»<sup>38</sup>:

Ոստի Անտիոքի Աթոռի բարձրացումը, Ոսկերեքանի օրով որպես Ա. Պոլսի՝ կայսրության երկրորդ նոր մայրաքաղաքի, սիիններով էր դիմավորում Թեոփիլոսը: Բարեբախտաբար Ոսկերեքանի առաջին արտոք միայն մի օր է տևում: Նա ետ է կանչվում Բյուզանդիայից մայրաքաղաք, Եդիսսահ կայսրուհու խնդրանքով և միջնորդությամբ:

Կայսրուհին մեծապես վախճնում էր ժողովրդական-ապստամբությունից: Ժողովուրդը սիրում և պաշտպանում էր Ոսկերեքանին և պահանջում էր, որ խկույն ետ վերադարձվի նա:

Ոսկերեքանի արտոքված երկյոն մայրաքաղաքում պատահած տարերային, տեղատարափ անձրևն ու ամեն ինչ քարուքանդ անող ամեղ փոթորիկը գնահատվում էր որպես աստվածային պատիժ ամբարշտ արյունիքի վրա:

Ոսկերեքանը մայրաքաղաք է վերադառնում եկեղեցական հաղթական թափոքով, «մեծաշուք պաշտամամբ»: «Անպատմելի եղև ցնծությոն քաղաքին»: Մեծ Հայրապետն առաջնորդվում է ս. Առաքելոց պատրիարքանիստ Մայր տաճար, ուր կատարվում է գոհաբանական մաղթանք, և Ոսկերեքանը խոսում է վերադարձի մի հուզիչ քարոզ:

Վերադարձի հաջորդ օրը մեծ Սուրբը խոսում է մի երկրորդ քարոզ, և կայսրուհու միջնորդությունը գնահատում է որպես նրա զղջումի և ապաշխարության մի արարք և նույնիսկ գովաբանում կայսրուհուն:

Ոսկերեքանի և կայսրուհու միջև կապացած այս «ժամանակավոր հաշտությունը», սակայն, երկար չի տևում, և երկու ամիս անց վերստին վրդովվում է մայրաքաղաքի և եկեղեցու խաղաղությունը «չար ու անպատկառ» կայսրուհու գրգռիչ և անպատասխանատու մի արարքով:

Կայսրուհին, որն իր բոլի մեջ էր հավա-

<sup>35</sup> Պրոֆ. Ն. Սագարդա, Հույն-Արևելքի մին եկեղեցական աստվածաբանական գիտությունը յուր ծաղկման շրջանում (IV—V դարեր), Վաղարշաատ, ս. Էջմիածնի տպարան, 1910, էջ 27—28:

<sup>36</sup> Երվանդ վրդ. Տեր-Մինասյանց, նույնը, էջ 294—296:

<sup>37</sup> Նույնը, էջ 295:

<sup>38</sup> Մանուկ Արևելյան, Հարց մին գրականության պատմություն, գիրք Ա, Երևան, 1944, էջ 250:

քել կայսերական ողջ իշխանությունը, հրամայում է մեծամտաբար իր արծաթե արձանը կանգնեցնել Մայր տաճարին առընթեր հրապարակի վրա: Արձանի բացման արարողությանն ուղեկցում են աղմկոտ և լայիք փողոցային խրախճանքներ, և՛ պար, և՛ երգ: Կայսրուհին իր այս անկուր ու դատապարտելի արարքով ուղղակի հակառակության մի նոր ձեռնոց էր նետում Ոսկեբերանին: Մեծ Սուրբը վրդովվում է մինչև իր հոգու խորքը կայսրուհու այս թշնամության պատճառով և «իր կրակոտ բնավորության հետևանքով անխոհեմության մի արարք է կատարում, որն իր հետևանքներով ճակատագրական է լինում Ոսկեբերանի համար»<sup>39</sup>:

Մտանում է ս. Հովհաննես Մկրտչի տոնը: Պատրիարքանիստ Մայր տաճարում Ոսկեբերանը, տոնի առիթով, արտասանում է մի հույակապ քարոզ, որն սկսվում է հետևյալ պատկերավոր բառերով. **Դարձեալ Հերովդիադայ մոլեգնեալ յանդգմի, դարձեալ կաքաւէ, դարձեալ միսսանգամ խնդրէ զգլուխն Յովհաննու ի Հերովդէ անօրէնութեամբ կտրել**<sup>40</sup>:

Ոսկեբերանի քարոզն ուղղված էր Նոր Հերովդիադայի՝ Եվդոքսիա կայսրուհու դեմ: Ակնարկությունը թափանցիկ էր:

Ոսկեբերանի հակառակորդներն օգտագործում են այդ հանգամանքը և վճռում՝ էրջնակալն ու վճռական հարված հասցնել նրան: Եվ չարերը հաջողում են իրենց սև գործի մեջ:

Նույն օրն իսկ Արկադիոս կայսրը ապօրինաբար հրամայում է Ոսկեբերանին՝ դադարեցնել իր եկեղեցական պաշտոնավարությունը մայրաքաղաքում:

Բոլոր եկեղեցիների դռները փակվում են մեծ Սրբի ստաշ:

Ոսկեբերանը չի հնազանդվում կայսերական հրամանին:

404 թվականին երբ Ոսկեբերանն իրեն համատարիմ հոգևորականների հետ Ջատկի խթման օրը կատարում էր հանդիսավորությամբ մի շարք մկրտություններ, արարողությունը խանգարվում է զինվորների կուպիտ միջամտությամբ: Հավատացյալներն արտաքսվում են եկեղեցուց, և մկրտության

սուրբ ջուրը ներկվում է մկրտվողների անմեղ արյունով:

404 թվականի հունիսի 9-ին, Հոգեգալստյան տոնից հինգ օր հետո, Ոսկեբերանին արքունիքից հրամայվում է իսկույն թողնել մայրաքաղաքը: Մեծ Սուրբն համակերպվում է այս անգամ հրամանին՝ առաջըր առնելու համար նոր անկարգությունների և արյունահեղությունների, «զի մի լիցի խոովութիւն ի ժողովրդեան»:

Ոսկեբերանն արքայից արքայի է զինվորների ուղեկցությամբ Փոքր Հայքի Կոկիսոն քաղաքը, «առեալ տարան յանապատն Հայոց», ուր մնում է երեք տարի, «և այդ պատճառով մի շարք հայկական ավանդություններ ևս հառաջացել են նորա անվան շուրջ»<sup>41</sup>:

Անտիոքի Աթոռի հոգևորականությունն ու ժողովուրդը դառնությամբ են լսում իրենց նշանավոր Հայրենակցի և եկեղեցու մեծ ու արժանավոր Հայրապետի անհրաժեշտ և հակակառնական արքայի մասին:

Անտիոքից դեպի Կոկիսոն ձգվում է ուխտավորությունների անընդմեջ շարքը՝ Ոսկեբերանին տեսնելու և նրան մխիթարելու համար: Այս հանգամանքը նույնպես գրքորոում է նրա թշնամիների նախանձն ու ատելությունը. «Երբ նրա թշնամիները տեսան, որ Անտիոքի եկեղեցուց մեծ ուխտագնացություններ են կատարվում դեպի Կոկիսոնի հայոց եկեղեցին, և Հովհանի շնորհալի իմաստության ձայնը հասնում է կրրկին այդ տեղից մինչև Անտիոք, նրանք որոշեցին վերջնականապես կտրել նրա կրակի թելը», ինչպես վկայում է նրա ժամանակակից կենսագիր Պալլադիոս Եպիսկոպոսը<sup>42</sup>:

Թշնամիները դիմում են կրկին Արկադիոս ապիկար և տկարամիտ կայսրին և խրնդրում՝ Ոսկեբերանին արքայից Սև ծովի արեվելյան ափին մի անմարդաբնակ վայր՝ Պիտիոս: Ոսկեբերանը ենթարկվում է ծանր տաժանակրության և ճանապարհի մի մեծ մասը ստիպված անցնում է հետիոտն, ցրրտաշունչ ձմռան եղանակին: Նա մահանում է ճանապարհին սեպտեմբերի 14-ին, 407 թվականին, 52 տարեկան հասակում, Պոնտոսի Կոմանա քաղաքի մոտ, չհասած իր արքայավայրը:

Մեծ Նահատակի թաղմանը ներկա են լինում շատերը, նույնիսկ «յոյժ հեռաորագոյն» տեղերից, ինչպես նաև Հայաստանից:

Ոսկեբերանը մայրաքաղաքը լքելուց ա-

<sup>39</sup> Quasten, նույնը, էջ 427:  
<sup>40</sup> Յովհաննու Ոսկեբերանի մեկնություն թղթոցն Պաղոսի, հատոր երկրորդ, Վենետիկ, 1862, «Ծառք», էջ 613, «Սօսք վասն Հերովդիադայ». Հովհաննես Մկրտչի գլխատման մասին կարդալ «Անտարան քստ Մատթեոսի», գլուխ ԺԴ 1-12, «Նոր Կտակարան», Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1975, էջ 41-42:

<sup>41</sup> Կնիք հաւատոյ, էջ Լ:  
<sup>42</sup> Quasten, նույնը, էջ 427:

ուայ դիմում է Հոռնի Իննովկենտիոս Ա Պապին, Միլանայի ու Ազգիլեիայի եպիսկոպոսներին և խնդրում դատ ու դատաստան անել:

Ալեքսանդրիայի Թեոփիլոս պատրիարքը Ռակեքերանի արքուագրկության և արտոքի մասին նույնպես իմացնում է Արևմտոքի նշանավոր եպիսկոպոսներին և Պապին, որոնք մերժում են հաշտվել կատարված ապօրինությունների հետ և պահանջում՝ Արևմտոքի և Արևելքի եպիսկոպոսների մի սինոդ հրավիրել ու հարցը քննել:

Արևմտոքի այս օրինավոր ստաշարկը երբ մերժվում է, Պապը և ողջ Արևմտոքը խզում են իրենց կապը Կ. Պոլսի և Ալեքսանդրիայի Աթոռների հետ, մինչ Անտիոքի Աթոռը պահանջում է խիստ պատասխանատվության կանչել մեղավորներին:

Միայն 438 թվականի հունվարի 27-ին մեծ Նահատակի առյուծը իր աշակերտ Պրոկոլ պատրիարքի օրով հանդիսավոր թափոքով արտոքավայրից փոխադրվում է Կ. Պոլսի և ամփոփվում ս. Առաքելոց Մայր տաճարում:

Թեոդոս Բ կայսրը (Կրտսեր), որը որդին էր «չար և անզգամ» Եվդոքսիա կայսրուհու՝ մահացած 404-ին, դիմավորում է հանդիսությամբ ս. Ռակեքերանի աճյունը և իր երեսը կպցրած դագաղին «անկեալ զլանջօք երանելույն», պաղատագին խնդրում է, որ ծնողները՝ Արկադիոս կայսրն ու Եվդոքսիա կայսրուհին, մեծ Սրբի ներդամտությանն արժանանան՝ իրենց կատարած հալածանքների և մեծ անիրավությունների համար: «Արդեօք ես ես լինիցի՞մ պատժատարտ վնասակարությունս մօր իմոյ... այլ եթե ներեսցես յանցանաց իմոց ես ես մար-

րեցայց ի պարսասանաց կարծեսց... բնկալ գնեղանչականս ի քեզ»<sup>43</sup>:

Մեր եկեղեցին տարին երկու անգամ կատարում է ս. Հովհան Ռակեքերանի տոնը: Առաջինը՝ հոկտեմբերի 28-ին<sup>44</sup>: Մեր Ծարակնցում մասնավոր մի Մանկունք կա, երեք տեղից բաղկացած, որը նվիրված է մեծ Հայրապետի «Հանգստեան յիշատակ»-ին. «Տր յանակիզքն ի Զօրէ բնկալար գնոզի գիտութեան... և յուսատրեցեր աստուածային բանի գեկեղեցի... Որ անապական Բանին քարոզ կոչեցար Բերան Ռակի, յորմէ աղբիր կենաց հոսեալ, արբուցանելով քառավտակ քղխմամբ զընդհանոր տիեզերս»<sup>45</sup>:

Ռակեքերանի երկրորդ տոնը մեր եկեղեցին կատարում է հոկտեմբերի 22-ին, «Երկուտասան վարդապետաց» տոնի հետ միասին<sup>46</sup>:

Ռակեքերանը բնութագրվում է «վասն մեր ամենից՝ աստուածապաշտական վարուց օրինակ. բահանաչական կացութեան նպատակ, վարդապետական իմաստից խողովակ. եպիսկոպոսական հեղինակութեան աղիսակ. պատրիարքական նոխութեան եղանակ, կղերիկոսական պաշտամանց աշտանակ. ս. Գրոց մեկնութեան մատույակ. հասարոյ պաշտպանութեան աշտարակ. ի կարգս քարունապետաց արուեսակ. ի յերանս հայրապետաց՝ լուսնթագ...»<sup>47</sup>:

(Ծարունակի)

<sup>43</sup> Պատմութիւն վարուց, նույնը, էջ 309:

<sup>44</sup> Օրացույց, Մայր Աթոռ, 1977, էջ 134:

<sup>45</sup> Չալմբաղ շարական, Վաղարշապատ, 1888, էջ 422:

<sup>46</sup> Օրացույց, Մայր Աթոռ, 1977, էջ 132:

<sup>47</sup> Պատմութիւն վարուց, նույնը, էջ IX: